

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ «ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ» (1972-1982 թթ.)

ԿԱՐԵՆ ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

1970-ական թվականներին ԱՄՆ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերի առանձնահատկություններից ու դրսևորումներից մեկը երիտասարդական և ուսանողական շարժման վերելքն էր, որը պայմանավորված էր ընտրական գործընթացի նկատմամբ նրանց աճող հետաքրքրությամբ: Իսկ ընտրությունները, ինչպես հայտնի է, քաղաքական գործընթացի առավել կարևոր տարրերից են: Նախընտրական պայքարի ընթացքում գործող իշխանության դեմ միավորվում են տարբեր ընդդիմադիր հոսանքներ, որոնց մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ուսանողական շարժումը: Ամերիկյան կառավարող շրջանակները, փորձելով կոնյունկտուրային նպատակներին ծառայեցնել ընտրությունների նկատմամբ ուսանողության դրսևորած հետաքրքրությունը, օգտվում են ինչպես ուսանողական որոշ կազմակերպությունների ակտիվությունից, այնպես էլ մյուսների կրավորականությունից: Նախընտրական գործընթացներին ուսանողության ակտիվ մասնակցությունը ոչ միայն էական ազդեցություն է թողնում քաղաքական ուժերի դասավորման վրա, այլև նպաստում է ուսանողական շարժման քաղաքական ազդեցության մեծացմանը: Ըստ այդմ, ուսանողական շարժման վերելքը ԱՄՆ-ում երիտասարդության հարցերը մղում է առաջին պլան՝ ամերիկյան քաղաքական վերնախավին ստիպելով լուրջ ուշադրություն դարձնել դրանց:

Ասվածն ամբողջությամբ վերաբերում է նաև էթնիկական խմբերի երիտասարդական կազմակերպություններին, որոնց քաղաքական ակտիվացումը ամերիկյան կառավարող շրջանակներին (թե՛ հանրապետականներին և թե՛ դեմոկրատներին) ստիպում է ավելի մեծ ուշադրություն դարձնել նրանց խնդիրներին, միջոցներ ձեռնարկել ընտրությունների ժամանակ այդ խմբերի ներկայացուցիչների ձայները իրենց օգտին ծառայեցնելու համար: Ամերիկյան ընտրական քաղաքական պայքարում էթնոմշակութային գործոնի ազդեցությունը առաջին հերթին պայմանավորված է ամերիկյան բնակչության բազմաէթնիկ կազմությամբ: Հաշվի առնելով երկրի բնակչության բազմաէթնիկ կառուցվածքը՝ ամերիկյան քաղաքական ուժերը մեծ ջանքեր են գործադրում էթնիկական խմբերի քաղաքական աջակցությունը ստանալու համար: Այդ է պատճառը, որ թե՛ դեմոկրատական և թե՛ հանրապետական կուսակցությունները ամեն կերպ ջանում են կապեր հաստատել էթնիկական փոքրամասնությունների ազդեցիկ կազմակերպությունների հետ:

Կոնգրեսականներն ու սենատորները, նահանգային ու տեղական մարմինների ընտրովի պաշտոնյաները ակտիվորեն համագործակցում են այդ կազմակերպությունների ղեկավարների հետ, ձգտում են աջակցելու նրանց ազգային-համայնքային խնդիրների լուծմանը և այլն, իսկ էթնիկական կազմակերպությունները, ի պատասխան դրա, նախընտրական պայքարի ընթացքում սատարում են այս կամ այն թեկնածուին: Քաղաքական համագործակցության այս մեխանիզմը միանգամայն ձեռնտու է ինչպես ամերիկյան ազդեցիկ քաղաքական ուժերին, այնպես էլ էթնիկական կազմակերպություններին:

1970-ական թվականներին ԱՄՆ հայ համայնքի հասարակական-քաղաքական կյանքում նույնպես նկատվում են նոր միտումներ, որոնք հատկապես բնորոշ էին ամերիկյան ծագում ունեցող հայ երիտասարդ սերնդին: Դեպի ամերիկյան քաղաքական առաջնությունները և հետաքրքրությունները կողմնորոշված, բայց միևնույն ժամանակ իրենց էթնիկական ինքնագիտակցությունը պահպանած ամերիկահայ երիտասարդներից շատերը սկսում են որոշակի հետաքրքրություն ցուցաբերել հայ ազգային խնդիրների լուծման նկատմամբ: Նրանց համար հատուկ կարևորություն ունեին ԱՄՆ քաղաքական կյանքում հայերի տեսակարար կշռի մեծացումը և հայ ազգային արժեքների ճանաչումը: Ամերիկահայ համայնքի հենց այդ խնդիրները լուծելու համար 1972 թվականին ստեղծվեց «Ամերիկայի Հայկական համագումար» կազմակերպությունը: Թեև դաշնային մակարդակում այն գրանցվել էր իբրև կրթական և մշակութային հիմնադրամ, իսկ նրա պաշտոնական նպատակը ԱՄՆ-ում հայ մշակույթի պահպանմանը, տարածմանը և ամերիկահայերի կրթությանը նպաստելն էր, սակայն իրականում կազմակերպության գործունեությունը ավելի լայն նպատակներ և խնդիրներ է հետապնդում:

1. Ամերիկյան հասարակայնության, օրենսդիր և գործադիր մարմինների կողմից 1915 թվականի Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով ԱՄՆ հանրային կարծիքի ձևավորումը, օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա ազդելը:

2. ԱՄՆ քաղաքական համակարգում ամերիկահայերի ներգրավումը՝ երկրի հասարակական-քաղաքական կյանքում հայերի դերի բարձրացմանը նպաստելու նպատակով:

Այս նպատակների իրականացմանն են ուղղված Հայկական համագումարի «կառավարական»¹, «հասարակական»², «գիտահետազոտական»³ և «ուսանողական» ծրագրերը:

¹ Տե՛ս **Կ. Նահապետյան**, Ամերիկայի Հայկական համագումարի «կառավարական ծրագիրը» (1972-1982), «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, հ. 2:

² Տե՛ս **Կ. Նահապետյան**, Ամերիկայի Հայկական համագումարի «հասարակական ծրագիրը» (1972-1982), «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, հ. 1, նույնի՝ Ամերիկայի Հայկական համագումարի կազմակերպումը, նպատակներն ու կառուցվածքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1997, հ. 3:

³ Տե՛ս **Կ. Նահապետյան**, Ամերիկայի Հայկական համագումարի գիտակրթական և մշակութային գործունեությունը (1972-1982), «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, հ. 3:

Ամերիկյան հասարակական-քաղաքական կյանքում ամերիկահայերի ներգրավվումը խրախուսելու նպատակով Ամերիկայի Հայկական համագումարն իրականացնում է հայ երիտասարդների ամենամյա գործնական ուսումնառության (պրակտիկայի) կազմակերպման ծրագիրը (Students Internship Program), որի շրջանակներում հայ ուսանողները և շրջանավարտները գործնական ուսումնառություն են անցնում ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի և Սենատի անդամների, պետական դեպարտամենտի, պաշտպանության նախարարության (Պենտագոնի), արդարադատության, առողջապահության նախարարությունների, ինչպես նաև Սպիտակ տան և պետական այլ գերատեսչությունների պաշտոնյաների գրասենյակներում, շփվում են պետական կառավարման մեխանիզմի առօրյա գործունեության հետ, իրենց մասնագիտական ընդունակություններին համապատասխան կատարում որևէ հարցի վերաբերյալ ուսումնասիրություն, մասնակցում տարբեր բնույթի փաստաթղթերի պատրաստմանն ու իրականացմանը, անձնական կապեր ու ծանոթություններ հաստատում ինչպես մյուս ուսանող-պրակտիկանտների (ինթերնների), այնպես էլ հասարակական, քաղաքական ազդեցիկ գործիչների, բարձրաստիճան պաշտոնյաների, լրագրողների, ձեռներեցների հետ: Ուսանողական պրակտիկական կազմակերպվում է ոչ միայն օրենսդիր ու գործադիր իշխանության մարմիններում, այլև ամերիկյան խոշորագույն լրատվամիջոցներում, ինչպիսիք են, օրինակ, «Ամերիքըն էնթերփրայզ ինսթիթյուցիոն», «Քորփորեյշն Ֆոր փաբլիք բրոդքասթինգ», «Նաշընլ փաբլիք ռեյդիո», «Ֆորին փոլիսի մեգըզին», «Լոս Անջելես թայմզ», «Նյու ռիփաբլիք մեգըզին», «Նյուսուիկ մեգըզին», «Յու-էս-էյ թուդեյ», «Վաշինգտոն փոստ», «Սի-էն-էն», «էյ-Բի-Սի», «էն-Բի-Սի», «Սի-Բի-էս» և այլ լրատվամիջոցները:

Սկիզբ առնելով 1975 թվականին՝ ծրագիրն աստիճանաբար ընդլայնում էր իր աշխատանքները, և եթե 1975 թվականին այն ուներ ընդամենը 4 ուսանող-շրջանավարտներ (որոնք, ի դեպ, բոլորն էլ իրենց պրակտիկական անցնում էին Կոնգրեսի՝ ներկայացուցիչների պալատի խոսնակ թոմաս Օ'նիլի գրասենյակում)⁴, ապա կարճ ժամանակ անց դրանց թիվն անցնում էր մի քանի տասնյակից⁵. իսկ 1982 թ.՝ 33 հայ ուսանող-շրջանավարտներ⁶: 1975-1985 թվականների ընթացքում ընդհանուր առմամբ Հայկական համագումարի «ուսանողական ծրագրով» գործնական ուսումնառություն են անցել շուրջ 300⁷, իսկ 1975-1995 թթ.՝ շուրջ 550⁸ հայ երիտասարդ մասնագետներ:

ԱՀՀ-ի «ուսանողական ծրագիրն» իրականացվում է ոչ միայն դաշնային, այլև նահանգային (տեղական) մակարդակով: Նահանգային մարմիններում ուսանողների պրակտիկայի կազմակերպման աշխատանքները ա-

⁴ Տե՛ս «Armenian Assembly of America. Aims and Accomplishments», էջ 7:

⁵ Տե՛ս «The Armenian Reporter», 20.10.1977: Մանրամասնորեն տե՛ս նույն տեղը, 18.08.1977, 13.07.1978, 19.04.1979, 02.10.1980, 22.10.1981:

⁶ Տե՛ս նույն տեղը, 22.07.1982:

⁷ Տե՛ս «A.A.A. Aims and Accomplishments», էջ 7:

⁸ Տե՛ս «A.A.A. Annual Report», 1996, էջ 25:

ռավել արդյունավետ են իրականացվում Կալիֆորնիայում, որտեղ կենտրոնացած է ամերիկահայերի զգալի հատվածը: ԱՅՀ-ի Կալիֆորնիայի մասնաճյուղի (Լոս Անջելես) ջանքերով միայն 1981 թ. ամերիկահայ 3 ուսանողներ իրենց պրակտիկան անցան Կալիֆորնիայի տեղական կառավարման մարմիններում՝ նահանգային սենատում, նահանգային ժողովում և Ֆրեզնոյի քաղաքապետի գրասենյակում⁹:

Ուսանողների պրակտիկան կազմակերպվում է ամռան ամիսներին և տևում է 6-10 շաբաթ: 1970-ական թվականների վերջերին կազմակերպության ղեկավարները փորձեցին մեծացնել ծրագրի տևողությունը՝ նախատեսելով նաև գարնանային և աշնանային շրջան: Սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հետևանքով (ֆինանսական, կազմակերպչական) ծրագիրը սահմանափակվեց միայն ամռան ամիսներով: Այդ իսկ պատճառով այն հաճախ անվանում են «ամառային պրակտիկա»: Մասնակիցների ընտրությունը կատարվում է մրցութային հիմունքով: ԱՅՀ-ի «ուսանողական ծրագրի» կոորդինացնող անձնակազմը նախապես հայտարարություններ է տարածում և դիմումի ձևեր ուղարկում այն բոլոր ցանկացողներին, ովքեր համապատասխանում են ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, մրցութին կարող են մասնակցել երրորդ կամ չորրորդ (ավարտական) կուրսի այն ուսանողները, որոնք դրսևորել են գերազանց կամ լավ առաջադիմություն, ունեն բարոյական բարձր բնութագիր և պատրաստ են ամռան ամիսներն անցկացնելու Վաշինգտոնում կամ ԱՄՆ մեկ այլ քաղաքում: Հաշվի է առնվում նաև տարածաշրջանային հավասարաչափ ընդգրկման հանգամանքը. հնարավորինս հավասար թվով մասնակիցներ են ընտրվում ամերիկահայ համայնքի հինգ խոշորագույն շրջաններից՝ Բոստոնի (Մասաչուսեթսի), Նյու Յորքի, Դետրոյտի (Միչիգն Արևմուտքի), Ֆիլադելֆիայի (Հարավատլանտյան) և Լոս Անջելեսի (Կալիֆորնիայի) շրջաններից:

Հարկ է նշել, որ 1970-1980-ական թվականներին Վաշինգտոնում ուսումնական պրակտիկա են անցել տարեկան չորս հազար ամերիկացի ուսանող – շրջանավարտներ: Նրանց ուսումնառությունը կազմակերպում էին կամ ամերիկյան առաջատար համալսարաններն ու քոլեջները, կամ առանձին անհատներ: Ամերիկայի Հայկական համագումարը միակ հասարակական կազմակերպությունն է, որ իրականացնում է այդպիսի ծրագիր: Ի դեպ, պրակտիկանտների թվում ամենախոշոր էթնիկական խումբը հրեական ծագում ունեցող երիտասարդներն են, որոնք նույնպես Վաշինգտոն էին ուղարկվում իրենց բուհերի կողմից¹⁰:

«Ուսանողական ծրագրի» շնորհիվ հայ շրջանավարտները ոչ միայն փորձով հաստատված արժեքավոր գիտելիքներ են ձեռք բերում և անձամբ ներգրավվում ամերիկյան քաղաքական գործընթացի մեջ, այլև Վաշինգտոնում փորձում են ներկայացնել ամերիկահայ համայնքի շահերը: Նրանց կատարած հնուտ և ձեռնհաս աշխատանքը Հայկական համագումարի և ա-

⁹ Տե՛ս «A.A.A. Newsletter» № 8, Winter, 1981, էջ 5:

¹⁰ Տե՛ս «The Armenian Reporter», 22.07.1982:

մերիկահայերի մասին դրական տպավորություն է թողնում կոնգրեսմենների կամ այլ պաշտոնյաների շրջանում: Այս պարագայում պետական կառավարման համակարգում ամերիկահայ երիտասարդ մասնագետների ներգրավման առավել բարենպաստ պայմաններ են ստեղծվում:

Հայկական համագումարը «ուսանողական ծրագրի» շրջանակներում նաև կազմակերպում է սեմինար-դասախոսություններ, որոնց մասնակցում են ամերիկյան հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում առաջատար և ազդեցիկ դիրքեր գրաված նշանավոր քաղաքագետներ, լրագրողներ, ձեռներեցներ, մտավորականներ: Մասնավորապես, 1979 թ. կազմակերպված սեմինարներին մասնակցում էին սենատոր Ջոն Գլենի (դեմոկրատ, Օհայոյից) մամլո քարտուղար Ստիվեն Ավագյանը, ՄԱԿ-ում ԱՄՆ նախկին ներկայացուցիչ Սեթ Մոմջյանը, Կոնգրեսի ներկայացուցիչների պալատի խոսնակ Թոմաս Օ'նիլի օրենսդրական հարցերով օգնական Լինդա Մելքոնյանը, կոնգրեսմեն Տոնի Կոելոյի (դեմոկրատ, Կալիֆորնիայից) վարչական հարցերով օգնական Արչի Նահիգյանը, սենատոր Կարլ Լ-Կինի (դեմոկրատ, Միչիգանից) մամլո քարտուղարի տեղակալ Ստիվ Սերկայանը¹¹: Այդ հանդիպումների ժամանակ ականավոր ամերիկահայ գործիչները իրենց մասնագիտական փորձն էին փոխանցում երիտասարդ հայ մասնագետներին, ինչպես նաև հաղորդում արժեքավոր գիտելիքներ ամերիկյան հասարակական-քաղաքական կյանքի այլազան բնագավառների մասին:

Ամերիկայի Հայկական համագումարի «ուսանողական ծրագրի» խնդիրներից մեկն էլ ԱՄՆ-ի քոլեջներում սովորող հայ ուսանողների համախմբումն ու միավորումն էր: Ճիշտ է, մինչ այդ նույնպես կային ակումբներ և կազմակերպություններ, բայց դրանք, փաստորեն, գործում էին իրարից անկախ ու տարերայնորեն:

1980 թ. փետրվարի 15-17-ին Կոլումբիայի համալսարանում տեղի ունեցավ ամերիկյան քոլեջներում սովորող հայ ուսանողների մի համաժողով, որին մասնակցում էին ԱՄՆ տասը նահանգներից և Կանադայից ժամանած շուրջ 115 հայ ուսանողներ: Համաժողովի մասնակիցները որոշեցին ստեղծել «Ամերիկայի քոլեջներում սովորող հայ ուսանողների ընկերակցություն», որը պետք է գործեր Հայկական համագումարի հովանավորության ներքո: Այն պետք է հաղորդակցություն ապահովեր Հյուսիսային Ամերիկայի քոլեջներում սովորող հայ ուսանողների միջև, աջակցություն ցուցաբերեր ուսանողներին և ուսանողական ակումբներին և ի վերջո նպաստեր հայ երիտասարդների ինտեգրմանը ամերիկյան հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ժողովի մասնակիցները ամերիկահայ երիտասարդությանը հուզող մի շարք կարևորագույն խնդիրներ քննարկելու նպատակով գումարում էին առանձին թեմաների նվիրված նիստեր, որոնց ընթացքում կարծիքներ և մտքեր էին փոխանակում այս կամ այն հարցի վերաբերյալ: Չնայած թեմաների զանազանությանն ու արտահայտված մտքերի տարակարծության-

¹¹ Տե՛ս «Asbarez», 5.07.1979:

ընդ՝ այնուամենայնիվ որոշ հիմնական հարցերում ժողովականները միակարծիք էին: Այսպես, արդեն համաժողովի առաջին իսկ նիստերի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողները վճռականապես դեմ էին ամերիկահայ համայնքում գոյություն ունեցող պառակտիչ տարրերի առկայությանը: Թե՛ եկեղեցական պառակտման և թե՛ կազմակերպությունների միջև գոյություն ունեցող հակամարտության հարցում մասնակիցներն արտահայտում էին այն կարծիքը, որ երկպառակությունները ջլատում են համայնքի ուժերը և լուրջ վնաս հասցնում հայ ժողովրդին: Նրանք հանդես էին գալիս միմյանց միջև տարածայնություններն ու անվստահությունը վերացնելու, համայնքի բոլոր ուժերը միավորելու և համախմբելու կարգախոսներով: Այնուհետև՝ երկար քննարկումներից հետո, մասնակիցները եկան այն եզրակացության, որ ամերիկահայ երիտասարդության առջև ծառայած առաջնահերթ խնդիրը ուժացման վտանգին դիմակայումն ու հայ ազգային ինքնության պահպանումն է: Ուսանողների կարծիքով, ամերիկահայ կազմակերպությունները պետք է ձգտեն առավել ակտիվորեն ներգրավվելու ամերիկյան հասարակական-քաղաքական համակարգում և օգտվելու այդ համակարգի ընձեռած հնարավորություններից¹²:

Առաջին հրատապ հարցերից մեկը, որը քննվեց այդ համաժողովում, նվիրված էր Միացյալ Նահանգներում հայկական ինքնության պահպանման խնդրին: Ջեկուցողներ Լորենս Այվազյանն ու դոկտոր Ջորջ Բուրնաթյանն ընդգծում էին, որ այս հարցում անհրաժեշտ է հաշվի առնել ամերիկյան և օտարերկրյա ծագում ունեցող հայերի (բնիկների և նորեկների) միջև առկա էական տարբերությունները: Բանն այն է, որ ոչ ամերիկյան ծագում ունեցող հայերը (այսպես կոչված՝ նորեկները) դժվարությամբ են հարմարվում ամերիկյան շրջապատին և որպես կանոն դուրս են մնում ամերիկյան հասարակական կյանքից: Միևնույն ժամանակ նրանք աչքի են ընկնում խիստ ընդգծված հայկականությամբ. խոսում են հայերեն, կարդում են հայատառ մամուլ, ներգրավվում են համայնքային տարբեր կազմակերպություններում և այլն: Ամերիկյան ծագում ունեցող ամերիկահայերը, ընդհակառակը, առավելապես կողմնորոշված են դեպի հասարակական և քաղաքական հետաքրքրությունների ամերիկյան տարրապատկերը, սակայն նրանք ձգտում են վերագտնել իրենց ազգային արմատները, մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հայոց լեզվի, պատմության, մշակույթի նկատմամբ:

Մասնակիցները հանգամանորեն քննարկեցին նաև այն հարցը, թե ինչպես կարող են օգնել հայկականությունը կորցրած հայերին վերագտնելու իրենց ազգային արմատները, գիտակցելու իրենց հոգևոր կապը հայ պատմամշակութային ժառանգության հետ և վերահաստատելու իրենց հայկական ինքնությունը: Ի վերջո հանգեցին այն եզրակացության, որ այդ նպատակին հասնելու լավագույն միջոցը հենց ամերիկյան այնպիսի մեխանիզմների արդյունավետ օգտագործումն է, ինչպիսին է, օրինակ, կարիերայի ստեղծման մասնագիտական պատրաստվածության, գործնական ուսում-

¹² Տե՛ս «The Armenian Reporter», 6.03.1980:

նառության կազմակերպման հարցերում ցուցաբերվող աջակցությունը: Պարբերաբար հայտնվելով հայկական միջավայրում՝ այդ մարդիկ ավելի ու ավելի են ներշնչվում հայեցի զգացումներով, և դա էլ իր հերթին նպաստում է նրանց ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

Սեմինարի ընթացքում քննարկված թեմաներից մեկը նվիրված էր եկեղեցական պառակտմանը: Հարկ է նշել, որ ուսանողներն այս հարցում հանդես եկան բավականին համարձակ հայտարարություններով ու հարցադրումներով՝ վերլուծելով եկեղեցական պառակտման պատճառներն ու հետևանքները, մատնանշելով եկեղեցական միավորումից բխող բարենպաստություններն ու այդ միավորման խոչընդոտների հաղթահարման ուղիները: Մասնակիցները հաստատեցին, որ հայ եկեղեցու պառակտման հետևանքով ամերիկահայ համայնքը նույնպես բաժանվել է երկու մասի, իսկ դա բացասաբար է անդրադառնում թե՛ մեկի և թե՛ մյուսի վրա: Սեմինարի մասնակիցների համոզմամբ, համայնքի և եկեղեցու պառակտման գործում մեղքի իրենց բաժինն ունեն նաև համայնքի հասարակական կյանքը տնօրինող որոշ քաղաքական կազմակերպություններ ու առաջնորդներ, ինչպես նաև եկեղեցական առանձին ղեկավար գործիչներ, որոնք վախենում են զրկվել իրենց արտոնյալ կարգավիճակից:

Ժողովի նիստերից մեկը նվիրված էր ամերիկյան քաղաքական համակարգում հայերի ներգրավման խնդրին: Նիստը վարում էին Հայկական համագումարի գործադիր մարմնի անդամ, ՄԱԿ-ում ԱՄՆ նախկին դեսպան Սեթ Մոնջյանը և Վան Աճեմյանը: Բանախոսներն ընդգծում էին ամերիկյան քաղաքական կյանքում հայերի մասնակցության կարևորությունը և մատնանշում դրա իրականացման հնարավոր եղանակներն ու ուղիները: Աճեմյանը քննադատեց հայկական որոշ կազմակերպությունների այն գործելակերպը, որ բարձր պաշտոններ զբաղեցնող իրենց հայրենակիցներին հիշում ու դիմում են սովորաբար միայն այն ժամանակ, երբ զգում են նրանց օգնության կարիքը: Մինչդեռ բանախոսի իրավացի կարծիքով. «Իրական ազդեցություն ձեռք բերելու համար նախ մենք պետք է օգնենք նրանց այն ժամանակ, երբ նրանք մեր կարիքն ունեն, այսինքն՝ նախընտրական արշավների ժամանակ»¹³, այնուհետև արդեն դիմել նրանց օգնությանը: Ուստի ամերիկյան պետական-քաղաքական գործիչների հետ հաստատուն կապեր պահպանելու համար հայկական կազմակերպություններին առաջարկվում էր ավելի մեծ նվիրատվություններ կատարել նախընտրական արշավների ընթացքում, այսինքն՝ միավորելով բազմաթիվ մանր դրամական նվիրատվությունները՝ միանգամից կատարել խոշոր ներդրում: Եվ ամեն անգամ, երբ անհրաժեշտ լինի տվյալ պաշտոնյայի կամ քաղաքական գործչի աջակցությունը, նրանք վստահորեն կարողանան օգտագործել իրենց քաղաքական կապերը և ակնկալել դրական արդյունք¹⁴:

«Աշխարհիկ և հոգևոր գործունեությունը» խորագիրը կրող նիստերը վարում էին Նուբար Դորյանն ու Գարեգին Գասպարյանը: Այս սեմինարի

¹³ Նույն տեղում:

¹⁴ Տես նույն տեղը:

ընթացքում ուսանողները ուրույն մտքեր էին արտահայտում ամերիկահայ համայնքում եկեղեցու դերի և տեղի մասին: Կարծիք հայտնվեց, որ եկեղեցու աշխարհիկ գործունեությունը պետք է համահունչ լինի նրա հոգևոր գործունեությանը. այն պետք է լինի ոչ թե միօրինակ, այլ հարմարեցվի համայնքի կարիքներին: Եկեղեցին պիտի հնարավորինս նեցուկ լինի աշխարհիկ կազմակերպությունների ոչ կրոնական գործունեությանը: Ուսանողների հանդամանք, եկեղեցին չպետք է ներքաշվի քաղաքականության մեջ, մասնակից դառնա կուսակցական-քաղաքական պայքարին: Մասնակիցները, մեկ անգամ ևս մերժելով առանձին կազմակերպությունների պառակտիչ գործունեությունը, կարևորեցին ամերիկահայ համայնքում և ընդհանրապես սփյուռքահայության կյանքում հոգևոր կառույցի դերն ու նշանակությունը:

«Ամերիկյան լրատվամիջոցները» խորագրով սեմինարը վարում էին Լևոն Քեչիշյանն ու Ջոն Բաղյանը, որոնք հիմնականում շոշափում էին հայ համայնքի խնդիրները առաջ քաշելու գործում ամերիկյան լրատվամիջոցների օգտագործման հնարավորությունները, ինչպես նաև հայկական լրատվամիջոցներին առնչվող որոշ հարցեր: Ընդունելով հայ մամուլի դերը ազգապահպանության գործում՝ մասնակիցները միաժամանակ քննադատում էին որոշ պարբերականների՝ չափից ավելի շաղակրատական հոդվածներ գետեղելու պրակտիկան և առաջարկում թերթերում տպագրվող հոդվածների նկատմամբ ցուցաբերել խստապահանջ վերաբերմունք: Լ. Քեչիշյանը կարևորում էր ամերիկյան լրատվամիջոցներում ամերիկահայ համայնքի, հայոց պատմության, մշակույթի և առհասարակ հայ ժողովրդի մասին պարբերաբար հոդվածներ տպագրելու անհրաժեշտությունը: Ընդ որում, մեծ նշանակություն էր տրվում նաև տեղական լրատվամիջոցների հետ ամուր կապերի հաստատմանը:

Համայնքում գործող հայկական հաստատությունների՝ հասարակական կազմակերպությունների, քաղաքական կուսակցությունների և եկեղեցական հաստատությունների գործունեությանն ու խնդիրներին էր նվիրված Մայքլ Չարությունյանի և Ջեյ Անդրեասյանի վարած նիստը: Ուշագրավ է, որ ուսանողները առանձնապես չմասնավորելով իրենց խոսքը, դժգոհ էին հասարակական բոլոր կազմակերպությունների գործունեությունից: Դեռ ավելին, ինչպես ասվեց, երիտասարդ սերնդի ներկայացուցիչներին անհանգստացնում էին ամերիկահայ կազմակերպությունների միջև եղած բևեռացումն ու երկպառակությունները, որոնք, ըստ ուսանողների, ձեռնտու են միայն առանձին խմբավորումների, քանի որ այդ երկփեղկվածությունը նրանց հնարավորություն է տալիս պահպանելու իրենց արտոնյալ վիճակը: Ընդգծվում էր միասնական ու կենտրոնացված կազմակերպություն ունենալու անհրաժեշտությունը. կազմակերպություն, որը կարող էր համակարգել և միավորել այդ խմբերի գործունեությունը: Նրանց կարծիքով, այդպիսի մարմին կարող էր լինել Ամերիկայի Հայկական համագումարը, որը միավորում էր համայնքի գրեթե բոլոր ազդեցիկ ուժերը և, վերկուսակցական մարմին լինելով, ձգտում էր ամերիկահայության շրջանում

հաստատել վստահության ու միասնության մթնոլորտ, համակարգել կազմակերպությունների աշխատանքները, ապահովել նրանց միջև սերտ համագործակցություն և հայ ժողովրդի շահերը ներկայացնել Վաշինգտոնում: Անթույլատրելի էր համարվում քաղաքական խմբերի միջամտությունը եկեղեցու գործերին՝ նրանց վերապահելով միայն հայ ազգային արժեքները և հայկական ինքնությունը պահպանելու խնդիրը: Բուռն բանավեճերից հետո ժողովականները հանգեցին այն եզրակացության, որ ավելի կենսունակ լինելու համար համայնքի հաստատությունները պետք է դառնան ամերիկյան հասարակական - քաղաքական համակարգի անբաժանելի մասը:

Սուր տարակարծություններ դրսևորվեցին Յայկական հարցին առնչվող սեմինարում, որը վարում էին դոկտ. Վալտեր Բանդազյանը և Լեո Յամայանը: Չնայած քննարկումները երբեմն բուռն էին և զգացմունքային, այնուամենայնիվ մասնակիցները վերջում կարողացան գալ ընդհանուր հայտարարի, այն է՝ հայերն առաջին հերթին պետք է զբաղվեն Յայկական հարցի արժարծումներով և դրսևորեն հաղթանակի հասնելու կամք: Սակայն Թուրքիայի կողմից Յայոց ցեղասպանությունը ճանաչելու և պատմական Յայաստանի տարածքները վերադարձնելու հարցում դրսևորվեցին որոշակի տարակարծություններ: Մասնակիցների զգալի մասի համոզմամբ, հնարավոր է պատմական Յայաստանի տարածքները վերադարձնել օրինական՝ խաղաղ ճանապարհով: Մյուսները միակ միջոցը համարում էին զինված մեթոդները (ահաբեկչությունը): Քիչ չէին նաև այնպիսիք, ովքեր անհնար էին համարում Թուրքիայի կողմից ապագայում տարածքային որևէ զիջում կամ փոխհատուցում: Նշվում էր, որ 1915 թ. ցեղասպանությունից ի վեր ոչ մի անհատ կամ կազմակերպություն չի փորձել համապարփակ ու բազմակողմանի վերլուծություն կատարել Յայկական հարցը լուծելու և կորցրած տարածքները վերադարձնելու հնարավոր մեթոդների և ուղիների վերաբերյալ¹⁵:

Ժողովում քննարկվեցին նաև հայկական ավանդույթներին, հայ գիտնականներին վերաբերող և համանման այլ խնդիրներ: Այս քննարկումների ընթացքում արտահայտված ընդհանուր գաղափարը թերևս այն էր, որ հայկական ինքնությունը պահպանելու գործում առաջնահերթ նշանակություն ունի հայոց լեզվի, ինչպես նաև կրոնական, մշակութային, ընտանեկան ավանդույթների պահպանումը:

Առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում Յայկական համագումարի «ուսանողական ծրագրի» շրջանակներում ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների, հասարակական նշանավոր գործիչների, լրագրողների հետ հայ ուսանողների պարբերական հանդիպումներ կազմակերպելու հարցերը: Այդ շփումները գործնական մեծ նշանակություն ունեն երիտասարդ հայ մասնագետների համար, քանի որ դրանց ընթացքում քննարկվում են ամերիկահայությանը հետաքրքրող տարաբնույթ հարցեր, ձեռք են բերվում կարիերայի հեռանկարների համար խիստ

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

կարևոր ծանոթություններ, և, վերջապես, ընդլայնվում ու առարկայական են դառնում ամերիկյան հասարակական-քաղաքական համակարգի մասին նրանց ունեցած գիտելիքներն ու պատկերացումները:

Այսպես, 1982 թ. ամռանը Վաշինգտոնում կազմակերպված հանդիպումներին մասնակցում էին սենատորներ Կարլ Լևինը, Պոլ Ցոնգասը, Ռոբերտ (Բոբ) Պոուլը, Պոլ Սարբանեսը, Նենսի Կասեբաունը, Ջոն Գլենը, ինչպես նաև «էյ-Բի-Սի» հեռուստաընկերության լրագրողներ Ստիվ Բելը և Կետլին Սալիվանը:

Հուլիսի 1-ին սենատոր Կարլ Լևինի (դեմոկրատ, Միչիգանից) հետ կազմակերպված հանդիպմանը մասնակցում էր ամերիկահայ քսան ուսանող: Սենատորը առաջադրում էր Հայոց ցեղասպանությունը ԱՄՆ և միջազգային հանրության կողմից ճանաչելու գաղափարը: «Այնպիսի իրադարձությունը, ինչպիսին է հայերի ցեղասպանությունը, – ասում էր նա, – չպետք է անտեսված և մոռացված մնա պատմության հետին էջերում: Ցեղասպանությունը չլուծված հարց է, որը մեծ դեր պետք է խաղա թուրքիայի հանդեպ ԱՄՆ-ի քաղաքականության մեջ»¹⁶: Հարկ է նշել, որ Կ. Լևինը ամերիկյան սենատում Հայ դատի խնդրի նկատմամբ բարյացակամ դիրքորոշում էր դրսևորել դրանից դեռևս երեք և կես տարի առաջ: Նրա մամլո քարտուղարի տեղակալ Ստիվ Սերկայանի միջնորդությամբ կազմակերպված այդ հանդիպման ընթացքում հայ ուսանողները հնարավորություն ունեցան պարզելու սենատորի կարծիքն այնպիսի խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք էին միջուկային զինաթափումը, իրավունքների հավասարության մասին օրենքի ընդունումը, Իսրայելի ներխուժումը Լիբանան և այլն: Լևինը մտահոգություն էր հայտնում լիբանանահայերի ծանր կացության առիթով: Վերջում նա շնորհակալություն հայտնեց ԱՀՀ-ին՝ 1979 թվականից ի վեր իր գրասենյակին չորս շնորհալի հայ շրջանավարտ-պրակտիկանտներ տրամադրելու համար, որոնցից մեկը՝ Կրիս Բոյաջյանը, աշխատանքի է անցել սենատոր Լևինի գրասենյակում¹⁷:

Օգոստոսի 3-ին հայ ուսանողները հանդիպում ունեցան Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի անդամ Պոլ Ցոնգասի (դեմոկրատ, Մասաչուսեթսից) հետ: Սենատորը նոր էր վերադարձել Մերձավոր Արևելք կատարած ուղևորությունից, որտեղ նա հանդիպել էր Իսրայելի վարչապետ Սենախեն Բեգինի հետ, ինչպես նաև այցելել էր Լիբանան: Հունական ծագում ունեցող սենատորը, խոսելով հայերի ցեղասպանության մասին, նշեց, որ ինքը շատ է լսել հայերի կոտորածների մասին դեռ մանուկ հասակից: Նա անընդունելի էր համարում ցեղասպանության փաստի մերժումը թուրքիայի կողմից և դատապարտեց թեև Ավիվում կազմակերպված Ողջակիզման (Հոլոքոստի) և ցեղասպանության կոնֆերանսին հայերի մասնակցությունը սահմանափակելու և կանխելու թուրքական իշխանությունների վերջին փորձերը: Բանն այն է, որ թուրքական կառավարությունը մեծ ճնշում էր գործադրում Իսրայելի իշխանությունների վրա՝ բողոքելով

¹⁶ «The Armenian Reporter», 12.08.1982.

¹⁷ Տես նույն տեղը:

հայ գիտնականների մասնակցության դեմ, պահանջելով չեղյալ հայտարարել գիտաժողովը: Ամերիկայի Հայկական համագումարը ակտիվ արշավ կազմակերպեց Թուրքիայի հակահայկական գործողություններին հակադրելու համար. դատապարտող հայտարարություններ ուղարկվեցին ԱՄՆ-ի կոնգրեսի անդամներին, հրեական ու ամերիկյան մամուլին: Բացի այդ, կազմակերպության ղեկավարները հանդիպումներ ունեցան մի շարք կոնգրեսականների հետ՝ նրանց ուշադրությունը հրավիրելով հայոց ցեղասպանության փաստը մերժելու Թուրքիայի փորձերի վրա: Չնայած իսրայելական որոշ հաստատություններ հրաժարվեցին գիտաժողովին մասնակցելուց, այնուամենայնիվ Թել Ավիվում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսին մասնակցեց աշխարհի տարբեր երկրներից շուրջ 200 գիտնական, այդ թվում նաև՝ հայ գիտնականների պատվիրակությունը, որի կազմում էին Ռիչարդ Հովհաննիսյանը, Վահագն Դադրյանը, Ավետիս Սանջյանը, Լեո Համալյանը և ուրիշներ¹⁸:

Սենատոր Ցոնգասը անհանգստություն հայտնեց նաև Թուրքիայում մարդու իրավունքների ոտնահարման կապակցությամբ և քննադատեց ԱՄՆ-ի՝ Թուրքիային ռազմական և տնտեսական օգնություն հատկացնելու քայլերը:

Սենատոր Ռոբերտ Դոուլը (հանրապետական, Կանզասից) օգոստոսի 6-ին ուսանողների հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտնեց, որ իր հայազգի բարեկամ Համբար Կելեքյանի շնորհիվ ինքը քաջածանոթ է հայոց պատմությանը: Նա դատապարտեց հայերի նկատմամբ գործադրված «թուրքական սարսափելի ջարդերը», բայց միաժամանակ ընդգծեց, որ Կոնգրեսի անդամները շատ քիչ բան գիտեն հայերի ցեղասպանության մասին և հույս հայտնեց, որ Կոնգրեսում իրենց պրակտիկական անցնող հայ ուսանողները կկարողանան լրացնել այդ բացը:

Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի անդամ, ծագումով հույն Պոլ Սարբանեսի (դեմոկրատ, Մերիլենդից) հետ օգոստոսի 10-ին կայացած հանդիպման ժամանակ քննարկվում էին Լիբանանում տիրող իրավիճակը և էթնիկ փոքրամասնությունների կացությունը Թուրքիայում: Այս հարցերը մեծ հետաքրքրություն էին առաջացրել հայ ուսանողների շրջանում: Սարբանեսի կարծիքով, Լիբանանում խաղաղությունն ու կայունությունը վերականգնելու համար անհրաժեշտ է այդ երկրից դուրս բերել օտարերկրյա բոլոր զորքերը և ստեղծել պետական կառավարման այնպիսի համակարգ, որ պաշտպանված լինեն ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հույների և հայերի իրավունքները: Անդրադառնալով Թուրքիայում մարդու իրավունքների վիճակին՝ Սարբանեսը վկայակոչեց, որ Թուրքիայում կոպտորեն ոտնահարվում են կրոնական և էթնիկական փոքրամասնությունների իրավունքները, որ հունական և հայկական դպրոցներում սահմանափակված է մայրենի լեզվի, պատմության և կրոնի ուսուցումը¹⁹:

¹⁸ Տե՛ս «The Armenian Reporter», 10.06.1982:

¹⁹ Տե՛ս «The Armenian Reporter», 7.10.1982:

Այդ հանդիպումների ժամանակ, իհարկե, ոչ միշտ էին հայ ուսանողները կարեկցանքի և հավանության խոսքեր լսում ամերիկյան պաշտոնյաներից, որոնց տեսակետները հաճախ քիչ էին տարբերվում թուրքական պաշտոնական դիրքորոշումից: Առավել ևս միամտություն կլիներ կարծել, թե Սենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի բոլոր անդամները պատրաստ կլինեն դատապարտելու հայերի ցեղասպանությունը կամ Թուրքիայում հայ համայնքի նկատմամբ գործադրվող ճնշումները: Այս հարցում արտաքին հարաբերությունների կոմիտեում և առհասարակ Սենատում առկա խիստ բացասական դիրքորոշումը բացատրվում էր Մերձավոր Արևելքում Թուրքիայի ստրատեգիական նշանակությամբ:

Սենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի ազդեցիկ անդամ Նենսի Կասեբաումի (հանրապետական, Կանզասից) հետ օգոստոսի 13-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ ընթացիկ անցքերը քննարկելիս մտքեր էին փոխանակվում դրանից ընդամենը յոթ օր առաջ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) Անկարայի օդանավակայանում ձեռնարկած գործողության մասին: Կասեբաումի կարծիքով, «շարունակվող ահաբեկչությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ հայ-թուրքական հակամարտությունը կարգավորելու ճանապարհին»²⁰: Երբ նրան հարցրեցին, թե Հայ դատի վրա միջազգային հանրության ուշադրությունը բևեռելու ինչ օրինական միջոցներ կառաջարկի հայերին, Կասեբաումը պատասխանեց, որ անհրաժեշտ է թուրքական դատությունները հետաքննելու նպատակով Սենատում անցկացնել ունկնդրումներ: Սենատի նույն կոմիտեի մեկ այլ անդամ՝ Ջոն Գլենը (դեմոկրատ, Օհայոյից), ցեղասպանության ճանաչման հարցը ընդհանրապես առաջնակարգ խնդիր չէր համարում կոմիտեի օրակարգում:

Հուլիսի 19-ին «ուսանողական ծրագրի» մասնակիցները հանդիպեցին «ԷՅ-Բի-Սի» հեռուստաընկերության լրագրողներ Ստիվ Բելի և Կետլին Սալիվանի հետ, որոնք ներկայացրին, թե ինչպես են նախապատրաստվում և եթե հեռարձակվում «Էյ-Բի-Սի» հեռուստաընկերության լրատվական հաղորդումները: Հայ ուսանողներին հատկապես հետաքրքրում էր այն հարցը, թե ինչու ամերիկյան լրատվամիջոցները, մասնավորապես «Էյ-Բի-Սի» հեռուստաընկերությունը, Լիբանանի իրավիճակը լուսաբանելիս չեն անդրադառնում լիբանանահայ համայնքի ծանր կացությանը: Սենատորը պատասխանեց, որ «լրատվության պակասը գուցե բացատրվում է այն փաստով, որ հայերը չեն առանցքային դերակատարները իրադարձությունների զարգացման գործընթացում»²¹: Նրա կարծիքով, միակողմանի կլինի լիբանանյան անցքերը մեկնաբանելիս ուշադրությունը սևեռել միայն հայ համայնքի վրա և լուսաբանել Լիբանանի քաղաքացիական պատերազմում նրա որդեգրած «դրական չեզոքության» դիրքորոշումը: Հանդիպման վերջում հայ պրակտիկանտները

²⁰ Նույն տեղում:

²¹ «The Armenian Reporter» 7.10.1982.

րը ամերիկացի հեռուստալրագրողներին տրամադրեցին տեղեկատվություն Չայնոց ցեղասպանության, ինչպես նաև պատմական այդ փաստը մերժելու թուրքական քարոզչության փորձերի մասին:

Ձանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության փորձի ուսումնասիրումը ապագա հայ լրագրողների համար գործնական կարևոր նշանակություն ուներ: «Ուսանողական ծրագրի» շրջանակներում Չայկական համագումարը հանդիպումներ է կազմակերպել նաև ամերիկյան այլ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:

1981 թվականից ԱՅՀ-ն լայնածավալ օգնություն է ցույց տվել ամերիկյան համալսարաններում և քոլեջներում գործող հայկական ուսանողական բազմաթիվ ակումբների: Այդ գործունեությունը համակարգում էր Չայկական համագումարի հովանու տակ գործող Ամերիկայի հայկական ուսանողական ակումբների ֆեդերացիան (FASQA), որը միավորում էր ԱՄՆ-ի համալսարաններում և քոլեջներում գործող հայկական ավելի քան 60 ուսանողական ակումբներ: Ֆեդերացիան ֆինանսական և տեխնիկական աջակցություն է ցույց տալիս հայկական ակումբներին՝ գրադարանային գործը բարելավելու, ակումբների միջև անվճար անմիջական հաղորդակցություն ապահովելու, տեղեկատվություն փոխանակելու, մամուլի համար նախատեսված լրատվական նամակները նախապատրաստելու և այլ հարցերում: Չայկական համագումարը նաև օժանդակում և հովանավորում է հայկական ու հրեական ուսանողական կազմակերպությունների համատեղ ձեռնարկները, մասնավորապես Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումները: Ուսանողական ակումբների ֆեդերացիայի խնդիրներից մեկն էլ համալսարանական ուսումնական ծրագրերը կազմելիս անհրաժեշտ խորհրդատվության տրամադրումն է: Մեծ ջանքեր են գործադրվում համալսարանական ծրագրերում հայոց պատմությունը պատշաճ ձևով ներկայացնելու համար: Ֆինանսական աջակցության զգալի մասը նպատակաուղղվում է հայկական ակումբների համար հայագիտական անհրաժեշտ գրականություն (հայոց պատմության, լեզվի, մշակույթի, Չայ դատի, ամերիկահայերին հուզող խնդիրների և այլ հարցերի վերաբերյալ) ձեռք բերելուն²²:

1981 թ. նոյեմբերի 9-ին Մերիլենդի համալսարանում Չայ ուսանողների ընկերակցությունը և Հրեական ուսանողական միությունը կազմակերպել էին համատեղ միջոցառում՝ «Չայերի ցեղասպանությունը և Հոլոքոստը. անտարբերության սպառնալիքը» խորագրով: Բացվել էր նաև ցուցահանդես՝ ցեղասպանության մասին պատմող բազմաթիվ նկարներով, մամուլում տեղ գտած հրապարակումներով, քարտեզներով և այլն: Չայերի ցեղասպանությունը պատկերող բաժնում ցուցադրված էր նաև Ռիչարդ Հովհաննիսյանի հետ հարցազրույցի տեսաժապավենը, ինչպես նաև ԱՅՀ-ի «բանավոր պատմություն» ծրագրի շրջանակներում ցեղասպանությունը վերապրողների վկայությունների աուդիոժապավենները: Միջոցառման զլխավոր գաղափարն այն էր, որ 1915 թ. Չայոց ցեղասպանության հան-

²² Տե՛ս «A.A.A. Aims and Assomplishments», էջ 8:

դեպ միջազգային հանրության անտարբերությունը պատճառ դարձավ հետագայում ցեղասպանության դեպքերի կրկնության, ինչպես, օրինակ, հրեաների ցեղասպանությունը (Յոլոքոստը): Ցուցահանդեսի կազմակերպման գործում մեծ դեր է ունեցել ԱՅԴ-ի «ուսանողական ծրագրի» տնօրեն Լորենս Այվազյանը, որը նաև բազմաթիվ նյութեր էր տրամադրել²³: Հայկական և հրեական ուսանողական կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցությունը կարևոր նշանակություն ուներ Հայ դատի խնդիրը ամերիկյան հանրությանը պատշաճ ձևով ներկայացնելու առումով:

Ամերիկայի Հայկական համագումարի «ուսանողական ծրագրի» անբաժանելի մասն են կազմում հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության լուսաբանմանն ուղղված միջոցառումները: Ուսանողական պրակտիկայի ընթացքում կազմակերպվում են տարբեր գերատեսչություններում և հաստատություններում իրենց ուսումնառությունն անցնող ուսանողների պարբերական հանդիպում-հավաքույթներ: Գերազանցապես ամերիկյան ծագում ունեցող հայ ուսանողները բացառիկ հնարավորություն են ստանում լինելու հայկական միջավայրում, շփվելու իրենց հայրենակիցների հետ, խոսելու հայերեն, քննարկելու ընդհանուր հետաքրքրություններ կայացնող զանազան խնդիրներ: Հաճախ այդ «հոգևոր-մշակութային» միջոցառումներին մասնակցում են հայ համայնքի ազգապահպան կառույցները ներկայացնող երևելի գործիչներ ու մտավորականներ՝ պատմաբաններ, գրականագետներ, երաժիշտներ և այլն: Անկաշկանդ և ջերմ մթնոլորտում մասնակիցները ունկնդրում են հայոց պատմության վերաբերյալ դասախոսություններ, լսում հայկական երաժշտություն, երգում հայկական երգեր, պարում հայկական պարեր, համտեսում հայկական ավանդական ուտեստներ, մի խոսքով՝ ազգային արմատները կորցնելու վտանգի մեջ գտնվող հայ երիտասարդների մեջ հետաքրքրություն է արթնանում ազգային ավանդույթների, լեզվի, պատմության, մշակույթի, ընդհանրապես ազգային հոգևոր արժեքների նկատմամբ: Ուսանողների մասնագիտական-գործնական ուսումնառությունը ներդաշնակորեն լրացնող հոգևոր-մշակութային հավաքույթները կոչված են բարձրացնելու հայ երիտասարդների ազգային ինքնագիտակցությունը, ընդգծելու նրանց էթնոմշակութային պատկանելիությունը և ամենակարևորը՝ ուժեղացնելու նրանց ազգային ինքնապահպանության բնազդը: Այս հանգամանքը վճռորոշ նշանակություն ունի ամերիկյան ուժացնող միջավայրում: Խնդիրը նոր չէ: Սփյուռքահայ բոլոր համայնքներից ուժացման վտանգը առավել սպառնում է ամերիկահայությանը: Կ. Դալլաքյանը իրավացիորեն նշում է. «Ամերիկյան կյանքի համակարգը, երբ բացակայում է (գեթ իր արտաքին դրսևորումների մեջ) ազգային, թե կրոնական որևէ հալածանքը, էթնիկական փոքրամասնություններին զրկում է ազգային ինքնապաշտպանության բնազդից: Բնական հակազդեցությունը ենթագիտակցական մակարդակի վրա միշտ պրկված է պահպանում ազգապաշտպան լարերն ու փո-

²³ Տե՛ս «A.A.A. Newsletter», vol. 8, Winter, 1981, էջ 3:

կերը, երբ հայությունը ապրում էր մուսուլմանական միջավայրում, ամերիկյան պայմաններում՝ այսինքն նույնադավ շրջապատում, գրեթե իսպառ վերանում է»²⁴: Ահա թե ինչու Հայկական համագումարի ղեկավարները ոչ պակաս էին կարևորում ուսանողների պարբերական հանդիպումներն ու շփումները, նրանց համար կազմակերպվող հոգևոր-մշակութային տարբեր միջոցառումները:

Ամփոփելով Ամերիկայի Հայկական համագումարի «ուսանողական ծրագրի» շրջանակներում 1972-1982 թթ. իրականացված գործունեությունը՝ կարելի է եզրակացնել, որ այս կազմակերպությունը ուրույն տեղ է զբաղեցնում ոչ միայն ամերիկահայ համայնքի, այլև ամբողջ Սփյուռքի կազմակերպությունների շարքում: Սկզբնավորումից ի վեր «ուսանողական ծրագիրը» գնալով ավելի է ընդլայնվում՝ ընդգրկելով ավելի մեծ թվով հայ երիտասարդների: Այն ոչ միայն ապահովում է հեղինակավոր գործնական մասնագիտական ուսումնառություն, այլև ամերիկահայ երիտասարդների մեջ ամրապնդում է ազգային ինքնագիտակցությունը և հաստատուն դարձնում կապը ազգային հոգևոր արժեքների հետ: Ծրագիրը երկուստեք օգտակար և շահավետ է թե՛ ուսանողների և թե՛ կազմակերպիչների համար: Շրջանավարտների համար այն հնարավորություն է ստեղծում առաջին աղբյուրից ստանալու իրենց հետաքրքրող բնագավառի մասին գործնական անհրաժեշտ գիտելիքներ և, ըստ այդմ, հստակորեն պատկերացնելու կարիերայի հեռանկարները, իսկ Հայկական համագումարը հնարավորություն է ստանում համախմբելու համայնքի շնորհալի և եռանդուն երիտասարդների ջանքերը հայանպաստ ծրագրերի իրականացման համար՝ գործի դնելով նրանց պրոֆեսիոնալ պատրաստվածությունը:

Հայկական համագումարը համակարգողի դեր է կատարում այս գործընթացում: Մինևույն ժամանակ, ԱՀՀ-ն աջակցում է հայ շրջանավարտներին իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատանքի տեղավորելու հարցում, նրանց հատկացնում է կրթաթոշակներ, աջակցում է ուսանողական կազմակերպությունների համագործակցության զարգացմանը: «Ուսանողական ծրագրի» գլխավոր նպատակներից մեկը ԱՄՆ-ի հասարակական-քաղաքական կյանքում ամերիկահայերի ինտեգրմանը նպաստելն է: Էթնիկական մյուս խմբերի նկատմամբ հայերի համեմատաբար փոքրաթիվ լինելը այլևս չպետք է պատճառ դառնար քաղաքական համակարգում հայերի թերի կամ ոչ լիարժեք մասնակցության: Ամերիկյան ծագում ունեցող սերունդները կամ այսպես կոչված «բնիկները», ի տարբերություն խիստ ընդգծված հայկականությանը աչքի ընկնող «նորեկների», ազգային կեցության հեռանկարները տեսնում են ամերիկյան կյանքում համայնքի ինտեգրման մեջ: Նրանք մերժում են քաղաքական տարրաբաժանումները համայնքային մակարդակի վրա, որևէ առնչություն չունեն դասական ազգային քաղաքական կազմակերպությունների հետ, անհրաժեշտ են համարում գործուն ձևով ներգրավել երկրի հասարակական-քաղաքական համակարգում: Ինտեգրվելու շնորհիվ բազմաթիվ ամերիկահայեր ազդե-

²⁴ Կ. Դալլաբյան, Հայ սփյուռքի պատմություն, Եր., 1992, էջ 303:

ցիկ դիրքեր են գրավել ամերիկյան հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում՝ դաշնային և նահանգային կառավարման մարմիններում, պետական և դիվանագիտական ծառայության մեջ, արտադրության և ձեռներեցության ոլորտներում, առողջապահության, գիտության, մշակույթի և այլ բնագավառներում:

Հայկական համագումարի «ուսանողական ծրագրի» իրական նշանակությունը և արժեքը ակնառու դարձան սկզբնավորումից շուրջ երկու տասնամյակ հետո: Կազմակերպության ջանքերով բազմաթիվ հայ երիտասարդներ ծանրակշիռ դիրքեր ձեռք բերեցին ամերիկյան հասարակական կյանքի այլազան ոլորտներում: Ձևավորվեց ամերիկահայ ղեկավար գործիչների մի նոր սերունդ, որը, պետական կառավարման համակարգում ազդեցիկ դիրքեր գրավելով, հանդես է գալիս ամերիկահայության շահերի պաշտպանությամբ:

КАРЕН НАГАПЕТЯН – "Студенческая программа" Армянской ассамблеи Америки (1972–1982). – Армянская ассамблея Америки – одна из влиятельнейших общественно-политических организаций армян США. Ассамблея осуществляет различные программы, в их числе и так называемую "студенческую". В рамках этой программы армяне – студенты и выпускники американских вузов проходят практику в офисах членов палаты представителей и сената США, а также у сотрудников госдепартамента, министерств обороны (Пентагона), юстиции, здравоохранения, в Белом доме и других учреждениях. Студенты-практиканты в ежедневном режиме знакомятся, как функционирует механизм государственного управления, принимают участие в подготовке различных документов, устанавливают личные связи с политическими деятелями, высокопоставленными чиновниками, журналистами, предпринимателями.

В 1975–1985 гг. в рамках "студенческой программы" прошли практику около 300 молодых специалистов. Армянская ассамблея помогает соотечественникам получить работу, соответствующую их специальности, выделяет им стипендии.

Основная цель этой программы – способствовать интеграции молодых армян в общественно-политическую жизнь США. Благодаря ей многие достигли влиятельных позиций в различных областях деятельности: в федеральных и местных органах управления, на государственной и дипломатической службе, в производстве, предпринимательстве, здравоохранении, науке и культуре.

KAREN NAHAPETYAN – "The Student Program" of the Armenian Assembly of America (1972-1982). – The Armenian Assembly of America is one of the most influential political organizations of the Armenian community in the USA. The Assembly performs variety of programs, one of which is the "student program", within the scope of which Armenian students and graduates of American universities pass their practical training in the offices of members of the Houses of Representatives and the US Senate, employees of the State Department, Department of Defense (Pentagon), Justice, Health, as well as at the White House and other government agencies. Student interns

study the mechanism of the daily work of state management; they are involved in the preparation of various documents, establish personal contacts and acquaintances with influential social and political figures, senior government officials, journalists and entrepreneurs.

Since 1975 the program has expanded its activities, during 1975-1985, within the scope of the "student program" of the Armenian Assembly 300 young Armenian specialists passed their practical training. The Armenian Assembly also supports Armenian graduates to get employment in accordance with the received specialty, allocates scholarships, etc.

The main objective of this program is to facilitate the integration of Armenians in the political life of the United States. Through this integration, many Armenians have achieved influential positions in various areas of public life in the USA: in the federal and local management bodies, state and Foreign Service, manufacturing, business, health, science, culture and other spheres.